ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՀ ֆինանսների նախարարության 2017 թվականի օգոստոս ամսվա գործունեության վերաբերյալ (հարկային մարմնի մասով)

<u>Ընթացիկ աշխատանքներ</u>

Նախնական տվյալներով 2017 թվականի 8 ամիսների ընթացքում ԱՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները և տուրքերը կազմել են 22545.2 մլն դրամ՝ պլանավորված 20992.4 մլն դրամ ցուցանիշը գերազանցելով 7.4 տոկոսով կամ 1552.8 մլն դրամով, իսկ նախորդ տարվա նույն ցուցանիշը՝ 22.6 տոկոսով կամ 4162.0 մլն դրամով:

Օգոստոս ամսում ԱՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները և տուրքերը կազմել են 3556.9 մլն դրամ՝ պլանավորված 3400.0 մլն դրամ ցուցանիշը գերազանցելով 4.6 տոկոսով կամ 156.9 մլն դրամով, իսկ նախորդ տարվա նույն ցուցանիշը՝ 41.5 տոկոսով կամ 1042.8 մլն դրամով:

Հաշվետու ամսվա ընթացքում հարկային մարմնում գրանցվել (հաշվառվել) է թվով 103 տնտեսավարող սուբյեկտ, լուծարվել՝ 7 տնտեսավարող սուբյեկտ:

Կառուցվածքային ստորաբաժանումների կողմից կատարվել է 55 ստուգում, որոնց արդյունքում լրացուցիչ հաշվարկվել է 62.5 մլն դրամ հարկային և այլ պարտադիր վճարների գծով պարտավորություններ, այդ թվում՝ պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության 22 ստուգում՝ 61.8 մլն դրամ գումարով:

Հաշվետու ամսում «Հարկերի վճարումից խուսափելու և հարկային իրավախախտումների դեմ պայքարի» հայեցակարգի շրջանակներում շարունակվել են հսկողական միջոցառումները՝ ուղղված հարկ վճարողների կողմից հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների խախտման, ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների թերհայտարարագրման և ապօրինի գործունեության ծավալման դեպքերի բացահայտմանը, որոնց արդյունքում արձանագրվել են հսկիչ-դրամարկղային մեքենաների միջոցով դրամական հաշվարկների կանոնների խախտման 6, ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների թերհայտարարագրման և ապօրինի ձեռնարկատիրական գործունեության իրականացման մեկական դեպքեր:

Նույն ժամանակահատվածում կատարվել են թվով 86 ուսումնասիրություններ, այդ թվում՝ 65-ը՝ հսկիչ-դրամարկղային մեքենաների ներդրման անհրաժեշտության, 4-ական՝ հարկային հաշվանցումների և (կամ) վերադարձի հիմնավորվածության ու ակցիզային դրոշմանիշների շարժի և դրոշմավորման կանոնների պահպանման, 3-ը՝ դրամական միջոցների շարժի և մնացորդի ուսումնասիրության և 10 այլ ուսումնասիրություններ:

Հաշվետու ամսում ԱՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան է ներկայացվել 22 վարչական գործ՝ 28.8 մլն դրամ գումարով:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով քննված 95 վարչական գործով սահմանվել է 1.2 մլն դրամ վարչական տուգանք:

Հարկ վճարողներին սպասարկող ստորաբաժանումների կողմից ընդունվել և մշակվել է 5481 հաշվարկ-հաշվետվություն, որից էլեկտրոնային եղանակով՝ 4898:

Էլեկտրոնային եղանակով հաշվետվությունների ներկայացման նպատակով հարկ վճարողների հետ կնքվել են թվով 39 պայմանագրեր:

Հիփոթեքային վարկի սպասարկման համար վճարված տոկոսների գումարների չափով վարձու աշխատողների և անհատ ձեռնարկատերերի կողմից վճարված եկամտային հարկի գումարների վերադարձման գործընթացի շրջանակներում կատարվել է վերադարձ 76 վարձու աշխատողի՝ 12.3 մլն դրամի չափով:

Եռամսյա ժամկետով հարկային արտոնություններից օգտվելու նպատակով գործունեությունը նոր սկսող 52 հարկ վճարողների տրամադրվել են հավաստագրեր:

Ֆինանսների նախարարի հրամանով սահմանվել է «Սնանկության վարույթի ընթացքում հարկային և այլ պարտադիր վճարների գծով լրացուցիչ առաջացած պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվության ձևը և լրացման կարգը»:

Ուսումնասիրվել են պետական կառավարման այլ մարմինների կողմից ներկայացված իրավական ակտերի նախագծերը:

ՀՀ և ԱՀ հարկային մարմինների միջև իրականացվել են անուղղակի հարկերի հաշվանցումների համար հիմք հանդիսացող փաստաթղթերի, տեղեկությունների փոխանակման աշխատանքներ:

<u>Հասարակայնության հետ կապ</u>

Հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքի միջոցով շարունակվել են հանրային իրազեկման աշխատանքները:

Հաշվետու ժամանակահատվածում հարկային մարմին է մուտքագրվել 484, ելքագրվել՝ 169 նամակ-գրություն, որոնք ընթացքավորվել են ըստ գործող կարգի, այդ թվում՝ հարկային օրենսդրական դրույթների պարզաբանման նպատակով ներկայացվել է 6 գրություն: